ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» Հունվար 2020թ. N ԿՊ/15-220

ք. Արմավիր

<< ՎԱՐԴԱՆԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի երկրորդ մասի <<դ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշման 6-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վարդանաշեն համայնքի 2019 թվականի դեկտեմբերի 20-ի N 162 գրությունը.

որոշում եմ՝

1. <<Վարդանաշենի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպությունը անվանակոչել <<Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Հաստատել <<Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ:
3. <<Վարդանաշենի Մայիս Մինասյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ նոր կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել իրավաբանական անձանց պետական ռեգիստր՝ պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Մարզպետ՝ ***Հ. Մաթևոսյան***

Invalid signature

VERIFIED OCSP 1/23/2020 11:55:37 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230